

## Տ. ՆՇԱՆ ՔԱՀԱՆԱ ՊԱՆՖԻԼՈՐՈՎ
(ավազանի անունը՝ Լևոն)

Ծնվել է 1977 թ. քաղաքամայր Երևանում:

1984-1994 թթ. սովորել է նախ Երևանի № 89, ապա՝ № 68 միջնակարգ դպրոցներում:

1995-2000 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում, ապա՝ Գևորգյան Հոգևոր Ճեմարանում՝ ավարտելով այն 2001 թ.:

2000 թ. մարտի 2-ին, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2001 թ. հուլիսից նոյեմբեր ամիսներին ծառայել է Գուգարաց թեմում՝ վարելով թեմի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի վարիչ-փնօրենի պաշտոնը:

Նույն թվականի նոյեմբեր ամսից ծառայության է անցել Մայր Աթոռի վարչակազմակերպական գրասենյակում՝ որպես գործավար-քարտուղար:

2002 թ. մայիսի 11-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «4-րդ 5-րդ դարերի Եկեղեցու Հայրերի վախճանաբանական հայացքները» թեմայով:

2002 թ. սեպտեմբերի 1-ին, Ս. Աստվածածնի գոտու գյուտի տոնի օրը, ձեռամբ Գերաշնորհ Տ. Սիոն եպս. Ադամյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա: